

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՁՐԱՎԱՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ելիզավետա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

Բանալի բառեր. արտահանում, ներդրում, ներդրման ոլորտ, ներդրումային քաղաքականություն, մրցակցություն, հանքարդյունաբերության ոլորտ, թեթև արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ

Ներդրումային գործունեության ակտիվացման և այդ ուղղությամբ նպատակամետ ու արդյունավետ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է ծրագրային մոտեցում, որը պետք է հիմնված լինի հստակ և իրատեսական ռազմավարության վրա: Հատկապես անցումային (կամ զարգացող) և փոքր ու բաց տնտեսությամբ երկրներում, ինչպիսին նաև Հայաստանի Հանրապետությունն է, շուկայական հարաբերությունների ձևավորումն ուղղակիորեն պահանջում է կազմակերպական ու տնտեսա-իրավական բնույթի համակարգված միջոցառումների հետևողական կենսագործում: Դրանցում, անշուշտ, կարևորագույն տեղ են զբաղեցնում ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված առաջնահերթություններն ու միջոցառումները: Միաժամանակ, առանց պետության ակտիվ մասնակցության, արտաքին առևտրային համապատասխան կազմակերպությունների միջամտության և Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի խորը ուսումնասիրության ու վերլուծության ներդրումների խթանման ասպարեզում գրեթե անհնար է ցանկալի նպատակների և հաջողությունների հասնել:

Արդյունավետ ներդրումային քաղաքականությունն անհրաժեշտաբար պետք է նպատակայնության տարրեր ներառի: Դա նշանակում է, որ այդպիսի քաղաքականությունը պետք է իրագործվի առանձին նպատակային ոլորտների ընտրության, խրախուսման և զարգացման հասցեականության միջոցով, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել: Այդ նպատակային ոլորտների ընտրությունը ճիշտ կատարելու համար պետք է հաշվի առնել ինչպես երկրի ներուժը, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացման միտումները և փոփոխությունները:

Որպես փոքր շուկա ունեցող երկիր Հայաստանի Հանրապետության ներքին շուկան առանձնահատուկ ուշադրության չի արժանանում վերազային կորպորացիաների (ՎԱԿ-երի) կողմից, ուստի ՎԱԿ-երի կողմից ներդրումների կատարման շարժառիթները Հայաստանի Հանրապետության դեպքում կամ մուտքն է տարածաշրջանի կամ ԱՊՀ և ԵԱՏՄ շուկաներ, կամ տեղական արտադրության գործոնների եղած ներուժի օգտագործումը: Խո-

շոր օտարերկրյա ներդրողների ուսումնասիրությունից երևում է, որ տեղական շուկայում գործում են հիմնականում ծառայությունների ոլորտը ներկայացնող խոշոր ընկերություններ՝ հեռահաղորդակցություն, զբոսաշրջություն, բացառությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների: Առանձին ուշադրության արժանի են այն ներդրումները, որոնց Հայաստանի Հանրապետությունում տեղակայվելու հիմնական շարժառիթն ԱՊՀ և ԵԱՏՄ, հատկապես, ռուսական շուկա մտնելն է: Վրաց-ռուսական քաղաքական հակամարտությունը բարդացրեց Հայաստանից Ռուսաստան արտահանվող ապրանքների տեղափոխումը: Արդյունքում արտահանվող ապրանքների տեղափոխման ծախսերն էականորեն աճեցին: Տարածաշրջանային շուկաներ մուտքի հետ կապված ևս առաջ են գալիս արտաքին քաղաքական գործոնները՝ հայ-ադրբեջանական հակամարտությունը, որի պատճառով տարածաշրջանում առավելություն է ստանում Վրաստանը, որն ունի ինչպես ազատ տնտեսական հարաբերություններ երկու հարևանների հետ, այնպես էլ մուտք դեպի ծով, այսինքն էժան տրանսպորտի հնարավորություն, ինչն առկա չէ Հայաստանի Հանրապետության դեպքում: Նշված խնդիրները պետք է հաշվի առնել, և, իհարկե, ներդրումներ ներգրավելու գրավիչ գործոնները դարձնել հիմնականում արտադրական գործոնների առկա ներուժը և առավելությունները, և ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղել դեպի այդ գործոններով հարուստ ոլորտների նպատակային զարգացումն ու առաջխաղացումը:

Հայաստանի Հանրապետության մրցակցության վերաբերյալ Մ. Պորտերի վերլուծության համաձայն՝ Հայաստանի մրցունակ կլաստերներն են ադամանդագործությունն ու ոսկերչությունը, ոգելից խմիչքները, զբոսաշրջությունը, գյուղատնտեսական արտադրանքը, հանքարդյունահանումն ու հանքարդյունաբերությունը, իսկ հեռանկարային զարգացող կլաստերներ են տեղեկատվական տեխնոլոգիաներն ու ցանցային (outsourced) ծառայությունները:

Դիտարկելով ՀՀ արտահանման ոլորտային կառուցվածքում հիմնական մասնաբաժինն ունեցող բնագավառները՝ պարզ է դառնում, որ այդ ոլորտների արտադրության ՀՀ-ում տեղակայման հիմնական շարժառիթները կարող են լինել երկուսը՝ տեղական որակյալ և էժան աշխատուժը և երկրում առկա հանքահումքային պաշարները, որակյալ գյուղմթերքները: Սակայն նպատակային ոլորտների ընտրությունը ոչ թե պետք է հիմնվի կոնկրետ ոլորտի ներկա ցուցանիշների կամ նախկինում գրանցած հաջողությունների վրա, այլ պետք է նաև ի նկատի ունենալ տնտեսության նոր ոլորտների համաշխարհային զարգացման միտումները, և հեռանկարային պլանավորում կատարել ՀՀ-ում նման ոլորտների զարգացման ուղղությամբ:

Ներդրումների ներգրավման և արտահանման տեսակետից մրցունակ ոլորտների համակարգված վերլուծության նպատակով բաժանենք ոլորտներն ըստ մարդկային և բնական գործոնի վրա հիմնված մրցունակության: Վերջինս կներառի ինչպես հանքանյութը, այնպես էլ գյուղմթերքները, պատմամշակութային արժեքները: Վերլուծության ընթացքում կօգտագործենք Միջազգային առևտրային կենտրոնի (ՄԱԿ) առևտրային գործունեության համաթիվը (ԱԳՀ)¹: Այսպիսով, փորձենք ԱԳՀ-ի միջոցով գնահատել ՀՀ տնտեսության ոլորտների մրցակցային առավելությունները և թերությունները: Հանքարդյունաբերության ոլորտում երկրի հիմնական առավելությունը, նախ, էժան մասնագիտացված կադրերի առկայությունն է (ադամանդի և թանկարժեք քարերի մշակում) և հումքային պաշարները (երկաթ, պղինձ, մոլիբդեն), այնուհետև, սկզբնապես ճիշտ ընտրված արտահանման շուկաները: Ադամանդի վերամշակման ոլորտում կարևոր են քաղաքական-տնտեսական սերտ կապերը Ռուսաստանի Դաշնության հետ, որը ադամանդի հումքի հիմնական արտահանողն է Հայաստան և որտեղ ադամանդի վերարտահանումն իրականացվում է պետության կողմից տրամադրված չափաքանակներով: Սակայն այս ոլորտը շատ թույլ է արձագանքում համաշխարհային շուկաների փոփոխություններին: Ոլորտը բնութագրող ԱԳՀ-ից ելնելով, կարելի է ենթադրել, որ հանքարդյունաբերության արտահանումը մի կողմից գնային տեսակետից դառնում է ավելի մրցունակ, մյուս կողմից նկատվում է որակի անկում: Հայաստանի Հանրապետության արտահանման քարտեզի վրա ադամանդի և թանկարժեք քարերի արտահանման դիրքը ցույց է տալիս, որ այն առաջատար ոլորտների դասին է պատկանում, և հիմնավորված ենք համարում հանքարդյունաբերությունն ընդգրկել նպատակային ոլորտների շարքում:

Ջարգացման միտում են դրսևորում նաև ֆինանսական ծառայությունները, ինչին նպաստում են նաև օտարերկրյա ներդրումները տեղական բանկերում: Սրա հետևանքով նվազում է ֆինանսական համակարգի ռիսկայնության մակարդակը, բարձրանում է վստահությունը բանկերի և դրանց գործունեության նկատմամբ: Շուկայի զարգացման և ռիսկայնության նվազման արդյունքում նվազում է բանկային տոկոսադրույքը: Դեռ թույլ են զարգացած լիզինգային ծառայությունները: Բացասական ազդեցություն ունի նաև դրամի փոխարժեքի աճը:

Քննարկման հաջորդ ոլորտը թեթև արդյունաբերությունն է, որտեղ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հագուստի արտադրությունը, քանի որ այն ՄԱԿ-ի կողմից էլ առանձին է դիտարկվում: Միայն 2011-2016թթ. արտահանումն աճել է ավելի քան 200%-ով: Այս ոլորտն ունի շատ

¹ International trade center. www.Intracen.org

թույլ ապրանքային և շուկայական բազմազանեցում, սակայն արտահանվող հիմնական մասնագիտացված ապրանքների և շուկաների բավականին հաջող ընտրություն է կատարվել: Արտահանվող արտադրանքը համապատասխանում է համաշխարհային պահանջարկին, սակայն չի կարող արագ արձագանքել այդ շուկաների փոփոխություններին: Ինչ վերաբերվում է հագուստի արտահանմանը, ապա նկատվում է կանանց և տղամարդկանց համար անհրաժեշտ հագուստի արտահանման ծավալների աճման շարժ, ինչպես նաև կտորեղենի, գործվածքների և հագուստի զարդերի արտահանման աճ, որոնց արտահանումը կազմում է ոլորտի ընդհանուր արտահանման հիմնական մասը: Հագուստի արտադրության և թեթև արդյունաբերության ցուցանիշները հիմնականում համընկնում են կամ մոտ են: Իհարկե, նշված ոլորտներում ամենակարևոր խթանն աշխատուժն է: Վերլուծությունից ելնելով՝ նպատակային ոլորտների ցանկում արդարացված ենք համարում թեթև արդյունաբերության և հագուստի արտադրության ընդգրկումը՝ հատկապես շեշտելով գորգագործության, գործվածքների, կտորեղենի, հագուստի զարդերի արտադրությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ արդեն բազմիցս խոսվել է, տնտեսության առաջնային ոլորտների համատեքստում: Այս ոլորտում Հայաստանի Հանրապետության առավելությունները հիմնականում հիմնված են տեղական որակյալ աշխատուժի վրա, որը լինելով համեմատաբար էժան՝ շատ բարձր արդյունավետություն է դրսևորում: Այս ոլորտում արտադրանքի մոտ 80%-ն արտահանվում է աշխարհի ավելի քան 30 երկիր: ՏՏ-ի ոլորտում գերակայում են օտարերկրյա կապիտալով ընկերությունները, որոնցից 65%-ը ամերիկյան են: Ոլորտի աշխատողների քանակն աճում է տարեկան 20%-ով, որից 70%-ը բաժին է ընկնում օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններին: Պետք է նկատել նաև, որ վերջին տարիներին նկատվում է աշխատավարձերի բարձրացման միտում:

Մյուս ոլորտը, որն արդեն իսկ կարելի է ճանաչել նպատակային, զբոսաշրջությունն է, որն ԱԳՀ շրջանակներում ՄԱԿ-ի կողմից չի գնահատվել: Զբոսաշրջությունը կարելի է դասել նպատակային ոլորտների շարքին, ոչ միայն տեղական բարձր ներուժի շնորհիվ, այլ քանի որ այն հանդիսանում է համաշխարհային տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը: 1950-2016թթ. զբոսաշրջությունից ստացված համաշխարհային եկամուտները 2.1 մլրդ ԱՄՆ դոլարից հասել են մոտ մեկ տրլն ԱՄՆ դոլարի: Հայաստանում զբոսաշրջության ոլորտում կատարվող հիմնական ներդրումներն ուղղված են հյուրանոցային ոլորտին: Դրանց վառ օրինակներն են «Երևան», «Կոնգրես», «Արմենիա Մարիոթ», «Թուֆենկյան», «Անի պլազա», «Հիլթոն», «Իմպերիալ» և մյուս հյուրանոցները: Ինչպես ցանկացած ոլորտ,

զբոսաշրջությունը ևս ունի իր առավելությունները և թույլ կողմերը: Նշենք, որ զբոսաշրջությունը Հայաստանում չպետք է դիտարկել որպես նոր զարգացող ոլորտ: Այն հարուստ ավանդույթներ ունի դեռևս խորհրդային տարիներից սկսած, երբ Երևանը ճանաչվել էր նախկին խորհրդային Միության երրորդ տուրիստական քաղաքը Մոսկվայից ու Լենինգրադից հետո: Ցանկացած զբոսաշրջիկի համար կարևորագույն նախապայման է երկրի հարուստ բովանդակությունը: Տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը հարուստ է ինչպես պատմական հուշարձաններով, այնպես էլ գեղեցիկ և բազմազան բնությամբ, հին պատմությամբ: Զբոսաշրջության զարգացման համար կարևոր դեր է խաղում նաև Սփյուռքը, որը դեռևս կազմում է երկիր մուտք գործող զբոսաշրջիկների մեծ մասը: Սփյուռքն աջակցում է զբոսաշրջության խթանմանը ոչ միայն այցելություններով, այլև՝ ներկայացնելով Հայաստանն արտասահմանում:

Ցանկացած ապրանք և ծառայություն սպառողին հասցնելու համար պետք է պատշաճ ներկայացվի, ինչը Հայաստանում բավարար մակարդակով չի կատարվում զբոսաշրջության բնագավառում: Բավական պասիվ է Զբոսաշրջության զարգացման գործակալության դերը զբոսաշրջության և ընդհանրապես Հայաստանի ներկայացման գործում: Զբոսաշրջության թույլ կողմերից կարելի է առանձնացնել ոչ որակավորված, անփորձ աշխատուժը, մատուցվող ծառայությունների բարձր գները, որոնք բարձրացման միտում ունեն, ավիատոմսերի և հյուրանոցների բարձր գները և տուրիստական ենթակառուցվածքի թերզարգացվածությունը:

Ներդրումների ներգրավման և արտահանման առաջխաղացման ծրագրի հիմքում պետք է դրված լինեն որոշակի սկզբունքներ, որոնցով պետք է ուղղորդվի նաև ՀՀ ՏՁՆՆ-ն և նրա վարած ընդհանուր քաղաքականությունը: Իհարկե, այդ կառույցի գերագույն նպատակը տնտեսության համընդհանուր և կայուն զարգացումն է, որին կարելի է հասնել մի շարք միջանկյալ նպատակների իրագործմամբ՝ արտահանման մրցունակության բարձրացում, տնտեսության դինամիկ զարգացող ոլորտների խթանում՝ անցում կատարելով առավելապես դեպի գիտատար և հեռանկարային ոլորտները, միաժամանակ բարձրացնելով ավանդական ոլորտների մրցունակությունը համաշխարհային շուկաներում: Այս ամենի համար պետք է առանձնացվեն այն ոլորտները, որոնցում կատարված ներդրումներն առավել օգտակար կլինեն և նվազագույն բացասական ազդեցությունը կունենան տնտեսության, հասարակության և տեղական կազմակերպությունների վրա: Արտահանման առաջխաղացման քաղաքականությունն անշուշտ պետք է ներառի տնտեսության բոլոր ոլորտները, սակայն դրանցից պետք է առաջնայնություն տրվեն հատկապես նպատակային ոլորտների և ապրանքատեսակների

արտահանման ընդլայնմանը: Եթե դիտարկենք ՀՀ արտադրանքի գիտատարության ներկա իրավիճակը, ապա պարզ է դառնում, որ ներկայումս հիմնականում արտահանվում են միջանկյալ սպառման ապրանքներ, իսկ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրանքի արտահանումը չնչին բաժին է կազմում: Զարգացման քաղաքականությունը պետք է ուղղորդվի այս իրավիճակի փոփոխությանը՝ տանելով տնտեսությունը առավելապես դեպի գիտատար սպառողական և կապիտալ ապրանքների արտադրությունն ու արտահանումը, ինչի դեպքում երկրում ստեղծվում է ավելի մեծ ավելացված արժեք և աճում են ոլորտում զբաղվածների աշխատավարձերը: Վերլուծության արդյունքում կարող ենք արդեն առանձնացնել արտահանմանն ուղղված ներդրումների ներգրավման նպատակային ոլորտները Հայաստանի Հանրապետությունում՝

- հանքարդյունահանում և վերամշակում,
- թեթև և հագուստի արդյունաբերություն,
- զբոսաշրջություն,
- էլեկտրասարքավորումների արտադրություն,
- սննդամթերքի արտադրություն և գյուղմթերքների մշակում,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- այլ արտադրություններ (ալկոհոլային խմիչքներ, ապակու արտադրանք, պանրի արտադրանք, պահածոներ):

Ընտրված ոլորտները հիմնականում հիմնված են տեղական հումքի վրա: Միայն ադամանդի և թանկարժեք քարերի վերամշակումն է տեղակայված Հայաստանում շնորհիվ որակյալ և մատչելի աշխատուժի: Սակայն եթե դիտարկենք այդ ոլորտները գիտատարության տեսակետից, ապա այն հիմնականում կազմված է միջանկյալ ապրանքներից: Պետության նախաձեռնությամբ, ակտիվ միջամտությամբ ու նպատակային քաղաքականությամբ արտահանման կառուցվածքը պետք է տեղաշարժվի առավելապես դեպի վերջնական արտադրանքի գերակայությունն արտահանման զանբյուղում, օրինակ՝ զարդեր և վերջնական վերամշակված ադամանդ:

Եթե որակյալ աշխատուժն ընդունված է որպես ՀՀ արտահանման համեմատական առավելություն, ապա տնտեսության ամենաթույլ կողմերից պետք է նշել արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները: Վերջիններիս, մասնավորապես, վերաբերում է տրանսպորտի և կապի թույլ զարգացվածությունը, որը հիմնականում պայմանավորված է հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ առկա քաղաքական հակասություններով, նախկինում զոյություն ունեցող ենթակառուցվածքի քայքայումով՝ ԽՍՀՄ կազմալուծումից հետո և դրա ոչ արդյունավետ հետագա և վերականգնման փորձերով: Հանրապետության համեմատական առավելու-

թյունների ամրապնդման և դրանք դինամիկ դարձնելու համար անհրաժեշտ է ոչ միայն ամրապնդել երկրի ուժեղ կողմերը, այլ նաև հնարավորինս չեզոքացնել և բարելավել թույլերը: Խոսելով արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավումների մասին՝ որպես առաջին հիմնախնդիր պետք է առանձնացնել ֆինանսական միջոցների սահմանափակություն և ենթակառուցվածքային բարեփոխումների բարձր ծախսատարությունը: Նման հանգամանքը հաշվի առնելով՝ բացի որոշ ենթակառուցվածքային կառույցների գույքի մասնավորեցումից, կարելի է նաև կիրառել նպատակային զարգացման սկզբունքը ենթակառուցվածքային բարեկարգումների դեպքում՝ առաջնայնության կարգով անհրաժեշտ մակարդակի հասցնելով նպատակային ոլորտները սպասարկող ենթակառուցվածքային կառույցները: Այսպես, բացի տրանսպորտային ենթակառուցվածքի բարեկարգումից, որն առնչվում է հիմնականում նպատակային արտադրության բոլոր ոլորտներին, առաջնային է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության ենթակառուցվածքների բարեկարգումը, որն ընդգրկված է դրանց մրցակցային հիմնական թույլ կողմերի շարքում:

Հայաստանի ներդրումային դաշտի, արտահանման համար մրցունակ արտադրանքի և ծառայությունների ներկայացման և տեղեկացվածության բարձրացման նպատակով ստեղծվել է համապատասխան ինտերնետային կայք՝ INVESTMENTPROJECT.AM: Կայքում զետեղված են ՀՀ-ում առկա մոտ 40 խոշոր ներդրումային ծրագրերը, որոնց վերաբերյալ պոտենցիալ ներդրողը կարող է ստանալ առավելագույն տեղեկատվություն: Հայաստանի ներդրումային միջավայրը ԱՊՀ երկրների շարքում ամենաբացերից մեկն է: Հայաստանի Հանրապետությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: Հայաստանի կառավարությունն իրականացնում է գործարար միջավայրի խորը և համապարփակ բարեփոխումներ՝ օտարերկրյա ներդրողների և գործարարների համար առաջարկելով գործարարության համար նպաստավոր միջավայր:

• համաձայն ՀԲ «Գործարարությանը զբաղվելը 2017» հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետությունը 38-րդն է 190 երկրների շարքում²:

• ԱՄՆ «Հերիթիջ ֆաունդեյշն»-ի կողմից ամեն տարի հրապարակվող «Տնտեսական ազատության համաթիվ 2017» հաշվետվությունում Հայաստանն իր վարկանիշով (70.3 միավոր) զբաղեցրել է 33-րդ հորիզոնականը³:

Տնտեսության ազատության և գործարարությանը զբաղվելու ցուցանիշներով Հայաստանն առաջատարն է ԱՊՀ երկրների շարքում:

² Doing business. Equal opportunity for all.2017. www.doingbusiness.org

³ The Heritage foundation. Index of economic freedom. 2017. www.heritage.org

Ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը 1994թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն է, որի համաձայն օտարերկրյա ներդրումներն ամբողջությամբ պաշտպանված են, ներդրողներն օգտվում են մի շարք երաշխիքներից և առավելություններից, նրանք գործում են ընդհանուր օրենսդրությանը համապատասխան (ինչպես տեղական ընկերությունները), ինչն ապահովում է նրանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք: ՀՀ օրենքների փոփոխության դեպքում 5 տարվա ընթացքում, ներդրողի ցանկությամբ, կիրառվում է իրականացման պահին գործող օրենսդրությունը⁴: Ներկայումս Հայաստանն ունի ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրեր շուրջ 40 երկրների հետ, համաձայնագրերը բանակցության փուլում են ևս 28 երկրի հետ: 1992 թվականից Հայաստանը անդամակցում է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին, ունի ազատ առևտրի համաձայնագրեր շուրջ 250 մլն ընդհանուր բնակչություն ունեցող ԱՊՀ անդամ երկրների մեծամասնության հետ, ինչպես նաև օգտվում է նաև ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի, և Նորվեգիայի «Արտոնությունների ընդհանրացված համակարգերից» (GSP), որոնք ապահովում են վերոնշյալ երկրների շուկաների արտոնյալ հասանելիությունը մի շարք ապրանքների համար ներմուծման գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերի միջոցով և ընդգրկված է ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգ» (GSP+) առևտրային ռեժիմից օգտվող երկրների ցանկում: 2015 թվականից Հայաստանը Եվրասիական տնտեսական միության անդամ է:

Հայաստանում գործում են հետևյալ արտոնությունները.

- ԱԱՀ վճարումը հետաձգվում է 1-3 տարի ժամկետով սարքավորումների ներմուծման համար,
- ԱԱՀ վճարումը հետաձգվում է 3 տարի ժամկետով Հայաստանի կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում,
- Հայաստանի կառավարության հավանությանն արժանացած արտահանման խոշոր ծրագիր իրականացնողների համար (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման, թանկարժեք քարերի մշակման և (կամ) իրացման, ոսկերչական իրերի արտադրության և (կամ) իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության և (կամ) իրացման ոլորտների) շահութահարկի դրույքաչափը

⁴ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք:

կազմում է 5% առնվազն 40 մլրդ դրամ արտահանման դեպքում, 2% առնվազն 40 մլրդ դրամ արտահանման դեպքում,

➤ Աջակցություն նորաստեղծ ՏՏ ընկերություններին: ՏՏ ոլորտի նորաստեղծ հավաստագրված ընկերությունները ազատված են շահութահարկից, իսկ եկամտային հարկի դրույքաչափը կազմում է 10%,

➤ Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում բացառապես Հայաստանի տարածքում օգտագործելու համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումն ազատվում է օրենսդրությամբ մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից, եթե այդպիսի տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին,

➤ Կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներից ապրանքների ներմուծումն ազատվում է մաքսատուրքից,

➤ Հայաստանի կառավարության հավանությանն արժանացած ծրագրի իրականացնող ռեզիդենտի (բացառությամբ առևտրի կամ ֆինանսական ոլորտների) համար հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով տվյալ տարում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100%-ի չափով, բայց ոչ ավելի, քան հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարի 30%-ը,

➤ սահմանամերձ համայնքներն ազատված է ԱԱՀ և շահութահարկից,

➤ Դիլիջանում 2 մլրդ դրամ և ներդրումների դեպքում ազատվում են ԱԱՀ-ից և շահութահարկից,

➤ Շահութահարկի, գույքահարկի, հողահարկի արտոնություններ արդյունաբերական գոտիներում,

➤ Հայաստանի ազատ տնտեսական գոտիների շահագործողներն ազատված են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման պարտավորություններից, նրանց ծառայություններ մատուցվում են «մեկ պատուհան» սկզբունքով: Ներկայումս գործում է «Ալյանս» ազատ տնտեսական գոտին բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության ոլորտում և «ՄԵՐԻԴԻԱՆ» ազատ տնտեսական գոտին ոսկերչության, ակնագործության ու ժամագործության ոլորտներում:

Ելիզավետա ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արտահանմանն ուղղված ներդրումների ներգրավման հիմնական ոլորտները Հայաստանի Հանրապետությունում

Բանալի բառեր. արտահանում, ներդրում, ներդրման ոլորտ, ներդրումային քաղաքականություն, մրցակցություն, հանքարդյունաբերության ոլորտ, թեթև արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նկատի ունենալով ՀՀ փոքր շուկան և արտաքին սահմանափակումները, տնտեսական աճի ապահովումը դառնում է կենսական անհրաժեշտություն, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հատկապես վերջին տարիներին ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներհոսքերը կտրուկ նվազել են, իսկ արտահոսքերն՝ ավելացել: Այս գործոնների ազդեցությամբ պայմանավորված 2016թ.-ին ՀՀ-ում գրանցվեց տնտեսական հավելաձի ընդամենը 0.2%: Ներկայացված են նաև ՀՀ ներդրումային քաղաքականության այն առավելությունները, որոնք գրավիչ կդարձնեն ներդրումները ՀՀ-ում:

Елизавета МАРКАРЯН

Привлечение инвестиций в основные экспортно ориентированные отрасли экономики Республики Армения

Ключевые слова: экспорт, инвестиции, сфера инвестирования, инвестиционная политика, конкуренция, горнодобывающая промышленность, легкая промышленность, информационные технологии

Ёмкость рынка РА, а также внешние ограничения не позволяют достичь достаточных темпов экономического роста без привлечения значительных инвестиций. За последние годы, к сожалению, отмечается тенденция уменьшения притока инвестиций, и наоборот, увеличения оттока инвестиций. Под влиянием указанных негативных факторов в 2016 году удалось достичь лишь 0.2%-ного прироста экономики. В статье представлены также особенности и преимущества инвестиционной политики РА, которые создают благоприятный инвестиционный климат.

Eetlibeth MARKARYAN

Attraction of investments in the main export-oriented industries of Armenia

Key words: export, investments, branch of investment, investment policy, competition, mining industry, light industry, information technologies

The capacity of the Armenian market, as well as external constraints, does not allow achieving sufficient economic growth without attracting significant investments. In recent years, unfortunately, there has been a tendency to reduce the inflow of investments, and, on the contrary, an increase in the outflow of investments. Under the influence of these negative factors, in 2016 only 0.2% growth of economy was achieved. The article also presents the characteristics and advantages of the investment policy of the Republic of Armenia, which create a favorable investment climate.